# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Ք.Հրազդան

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ Վ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ մյուս կողմից

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ ի դեմս

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը

ՏՆՕՐԵՆ Կ.Ռ.ՍԱՀԱԿՅԱՆ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Քույրական գործ» , "Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ»

մասնագիտության ուսանողների գործնական պարապմունքները և ուսումնա-արտադրական պրակտիկաներն անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան ____տեղ հատկացնել ուսանողների գործնական պարապմունքները և ուսումնական պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան / իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխու մը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատության , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր , նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին:

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 Ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում հաստատությունում , կազմակերպությունում / սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության /հաստատության, կազմակերպության/ տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի, հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար:

2.4. Պրակտիկան և գործնական պարապմունքները սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ ձեռնարկությանը /հաստատությանը, կազմակերպությանը/ ներկայացնել ուսանողների ցուցակը:

2.5. Ուսանողների կողմից օգտագործվող նյութերի և այլ ծախսերի համար «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը պարտավորվում է «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ամեն տարվա համար փոխանցել 60.000/վաթսուն հազար/ դրամ:

3. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է երեք տարի ժամկետով, սկսած 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ տվյալները:

Պատվիրատու
Կոտայքի տարածաշրջանային
Պետական քոլեջ
2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ 96

ՀԵՌ. 060-27-32-32
Հ/Հ160254503016

ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ ________ Վ. Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ ________ Կ. Ս. ՍԵՄԻՐՋՅԱՆ

«01» 09 2023թ.

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.ՀՐԱԶԴԱՆ,Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ,
ՊՈՒՐԱԿԱՅԻՆ 32

ՀԵՌ. +374-223-2-34-64
ՀՎՀՀ 01273752

ՏՆՕՐԵՆ ________ Կ.Ռ.ՄԱՀԱԿՅԱՆ

«01» 09 2023թ.